

## ԳԻՏՈՒԹԵԱՆ ԱՇԽԱՐՀԻՑ

ԲԻՕԼՈԳԻԱՅԻ \*) ԶԱՐԳԱՑՈՒՄԸ XIX ԴԱՐՈՒՄ

### I Սաղմնաբանական զիտեր

Անցեալ դարը շատերը անուանեցին *ընագիտութեան դար* և ունէին իրաւունք, թէև XIX դարում բացի *ընագիտութիւնից* ուրիշ գիտութիւններ էլ ծաղկեցին, սակայն զարգացման ծաւալով ամենից շատ աչքի էր ընկնում *ընագիտութիւնը*. կարելի է ասել, որ անցեալ դարում «տոն տուողը» *ընագիտութիւնն* էր:

Իրաւ, երբ դուք փորձում էիք թերթել *ընագիտութեան* XIX դարի պատմութիւնը, դուք մնում էք ապշած այն հսկայական աշխատանքի առաջ, որ կատարուել է *ընագէտների ձեռքով*. ճրքան պարզուած խնդիրներ, ճրքան հանճարեղ գիւտեր, ճրքան սրամիտ վարդապետութիւններ, բացուած լայն հորիզոններ...

XIX դարը դեռ նոր անցաւ պատմութեան շարքը, ուստի դեռ անկարելի է հիմնաւորապէս ուսումնասիրել և գնահատել այդ դարի նշանակութիւնը: Այդպիսի գործը դուրս էլ է իմ նպատակից, ես ցանկանում եմ միայն թռուցիկ հայեացք ձը-

---

\*) Ռեական գիտութիւնները բաժանուած են երկու մեծ խմբերի—ֆիզիկօ-քիմիական և քիւլոլոգիական խմբերի: Ֆիզիկօ-քիմիական խումբը պարունակում է հետեւեալ գիտութիւնները—ֆիզիկան, քիմիան, հանքաբանութիւնը, երկրաբանութիւնը, օդերկայթառանութիւնը ևայլն: Այդ գիտութիւնները հետազօտում են մեռած բնուէրներ: Բիօլոգիական խումբը պարունակում է կենդանաբանութիւնը, բուսաբանութիւնը, մարմնազննութիւնը և բնախօսութիւնը, սաղմնաբանութիւնը ևայլն:

Բիօլոգիական գիտութիւնների ուսումնասիրութեան առարկան կազմում է կենդանի բնուէրները:

գել անցեալ դարի ամենանշանաւոր բիօլոգիական հետազօտութիւններէ վրայ \*):

Առաջ, երբ բնագէտները կամենում էին ուսումնասիրել կենդանիների կամ բոյսերի այս կամ այն խումբը, նրանք իրանց ուսումնասիրութիւնների համար միշտ վերցնում էին արդէն զարգացած—կազմակերպուած օրինակներ, իսկ կենդանիների և բոյսերի սաղմերի վրայ ամենէին ուշադրութիւն չէին դարձնում: Նրանք չէին էլ իմանում, թէ այսպիսի դէպքերում սաղմերի ուսումնասիրութիւնը կարող է որևէ օգուտ տալ: Իսկ եթէ սաղմերի ուսումնասիրութեան նշանակութեան մասին հարցնէք այժմեան բիօլոգներին, նրանք կը պատասխանեն, որ բիօլոգն առանց սաղմնաբանութեան նոյնն է, ինչ որ նաւապետը առանց կողմնացոյցի: Ուզում եմ ասել, սաղմնաբանութիւնը գերիշխող նշանակութիւն է ստացել այժմեան բիօլոգիայի մէջ: Շատ բարդ և դժուար խնդիրներ պարզուել և իրանց լուծումն ստացել են միմիայն շնորհիւ սաղմնաբանական հետազօտութիւնների:

Սաղմերի ուսումնասիրութեան օժանդակութիւնը սկսեցին հասկանալ XIX դարի սկզբներում: Մի շարք երևելի գիտնականներ հրատարակեցին իրանց դատողութիւններն այդ խնդրի վերաբերմամբ: Մանաւանդ նշանաւոր է համարւում հանճարեղ գերմանացի գիտնական Կարլ Էրնստ Փօն Բերի «Նենդանիների զարգացման պատմութիւնը» գրուածքը, որով և հիմք դրուեց գիտական սաղմնաբանութեան (embryologie):

Սաղմնաբանութեան նպատակն է ուսումնասիրել կենդանիների և բոյսերի սաղմերի զարգացումը քայլառօքայլ: Ամենքին յայտնի է, որ՝ օրինակ՝ թռչունների ձուերը պարունակում են իրանց մէջ թռչունների սաղմեր, որոնք նպաստաւոր հանգամանքներում զարգանում են և որոշ ժամանակից յետոյ հասունանալով՝ կոտրում են կճեպը և դուրս են գալիս լոյս աշխարհ: Բանից դուրս է գալիս, որ սաղմերը իրանց զարգացման ժամանակ զարմանալի փոփոխութիւնների են ենթարկւում: Սաղմնաբանները մանրամասն ուսումնասիրել են

\*) Յօդուածս գրելիս օգտուել եմ հետևեալ հեղինակներից.

1, Эрнстъ Геккель—Трансформизмъ и дарвинизмъ.

2, Бергъ—Курсъ общей эмбриологіи.

3, Оскаръ Гертвигъ—Доклады, читанный въ Аахенѣ въ 1900

году.

4, Ч. Дарвинъ— Происхождение видовъ.

սաղմերի փոփոխութիւնները, այժմ՝ օրինակ՝ յայտնի է, թէ թռչունների սաղմերը ինչպիսի կազմուածք են ունենում զարգացման երկրորդ, երրորդ, չորրորդ օրը կայն. նոյնպիսի բարեխղճութեամբ ուսումնասիրուեցին նաև կաթնասունների, ձկների, սողունների և ուրիշ կենդանիների սաղմերը:

Այդ տեսակ հետազոտութիւնների ժամանակ սաղմնաբան Հ. Ռատկէի ուշադրութիւնը գրաւեց մի վերին աստիճանի տարօրինակ երևոյթ. նա նկատեց, որ թռչունների սաղմերն իրանց կազմութեամբ նման են ծովային կենդանիներին: Յայտնի է, որ ցամաքային կենդանիները շնչում են թոքերով, իսկ ծովային կենդանիները թոքեր չունին, նրանք շնչում են քիմուխտներով (branchies, жаберы): Թռչուններն էլ, ինչպէս ցամաքային կենդանիները, շնչում են թոքերով, մինչդեռ նրանց սաղմերը թոքերի փոխարէն ունենում են քիմուխտներ: Բացի այդ՝ թռչունների սաղմերի միւս գործարաններն էլ նման են ծովային կենդանիների գործարաններին. նրանց արեան անօթների, գանգի, ողերի կազմութիւնը նման չէ թռչունների նոյնանուն գործարանների կազմութեանը:

Յետագայ հետազոտութիւնները ցոյց տուին, որ կաթնասունների (նոյնիսկ մարդու) սաղմերն էլ իրանց կազմութեամբ նման են լինում ծովային կենդանիներին: Մաղմերն իրանց զարգացման ժամանակ փոքրաւիճքը կորցնում են քիմուխտները և այն գործարանները, որոնցով նման են ծովային կենդանիներին, և ստանում են այն գործարանները, որոնք յատուկ են իրանց ցամաքային ծնողներին:

Ծովային կենդանիներն ունենալով աւելի պարզ կազմութիւն, քան թռչունները և կաթնասունները, աւելի վաղ են երեւացել երկրագնդի վրայ, քան կաթնասունները: Վերջիններս աւելի ուշ ժամանակների ծնունդ են, ինչպէս ցոյց է տալիս երկրաբանութիւնը: Այդպիսով ուրեմն թռչունների և կաթնասունների սաղմերը նման են աւելի հին տեսակներին, որոնց կազմութիւնն աւելի պարզ և անկատար է՝ համեմատած կաթնասունների հետ:

Շուտով պարզուեց, որ այս երևոյթը ընդհանուր է. ամբողջ բնութեան մէջ նկատուում է, որ իւրաքանչիւր օրգանիզմի սաղմը նման է համեմատաբար աւելի ՚ին ու պարզ օրգանիզմներին:

Ի՞նչով բացատրել այս տարօրինակ երևոյթը: Այդ ի՞նչ է նշանակում, որ սողունների, թռչունների և կաթնասունների սաղմերը նման են իրանց կազմութեամբ ծովային կենդանիներին: Միթէ վերին աստիճանի զարմանալի չէ այն փաստը, աստուր, 1904.

սուս է էրնստ Հեկկելը, որ զանազան դասակարգերին պատկանող ողնաւորները—ձկները, երկկենցաղները, սողունները, թռչունները և կաթնասուններն իրանց սաղմային զարգացման ըսկզբնական շրջաններում ամենեին չեն տարբերում իրարից:

Այս զարմանալի երևոյթը բացատրուեց անցեալ դարի կիսում շնորհիւ զարգացման թէորիայի. այդ վարդապետութեան համաձայն՝ այժմ գոյութիւն ունեցող կենդանիների և բոյսերի տեսակները առաջացել են դարերի ընթացքում աւելի պարզ կազմութիւն ունեցող սկզբնական տեսակներից: Երկրաբանական հետազոտութիւնները վաղուց ապացուցել են, որ հին ժամանակներում չեն եղել ողնաւոր կենդանիներ—ձկներ, սողուններ, թռչուններ, կաթնասուններ: Առհասարակ պարզուեց, որ ըլոր որ ողնաւորների նախարայրերը եղել են ծովային կենդանիներ:

Ուրեմն պատահական չէ այն երևոյթը, որ թռչունների սաղմերը իրանց կազմուածքով նման են լինում ծովային կենդանիներին. բոլոր ողնաւորների սաղմերը նման են ծովային կենդանիներին այն պատճառով, որ ողնաւորները, այսինքն թռչունները, կաթնասունները կայն՝ հին ժամանակներում ծագել են ծովային կենդանիներից:

Այդպիսով՝ իւրաքանչիւր անհատի սաղմը իր զարգացման ընթացքում անցնում է նոյն շրջաններով, որոնցով անցել են նրա նախահայրերը հարիւրաւոր դարերի ընթացքում: Այդ հիման վրայ շատ գիտնականներ ասում են, որ սաղմերի զարգացման պատմութիւնը տեսակների զարգացման պատմութեան համաոտութիւնն է:

Մէկ օրինակով պարզենք այդ միտքը. մարդի կամ միւս կաթնասունների սաղմերն իրանց զարգացման ամենավաղ շրջանում ներկայացնում են մէկ հատ բջիջ, այսինքն նման են երկրազնդի ամենապարզ և ամենափոքրիկ էակներին. զարգացման երկրորդ շրջանում սաղմերը նման են լինում փոքր ինչ բարդ կազմութիւն ունեցող կենդանիներին. մի քանի ժամանակից յետոյ նոյն սաղմերը սկսում են նմանուել ձկնաման կենդանիներին. վերջապէս իրանց զարգացման ամենավերջին շրջանում սաղմերը սկսում են նմանուել իրանց ծնողներին—կաթնասուններին:

Վերոյիշեալ սաղմնաբանական հետազոտութիւններն ունեցան նաև մեծ գործնական նշանակութիւն. այժմ զանազան օրգանիզմների նմանութիւնը (ազգակից լինելը) որոշելիս դիմում են նրանց սաղմերին. եթէ երկու օրեւ տեսակ կենդանիների սաղմերն իրար շատ նման են, այդ նշանակում է, որ նոյն տե-

սակները ցեղակից են իրար հետ: Այդ գիւտի կարևորութիւնը հասկանալի կը լինի մեզ համար, եթէ ի նկատի ունենանք, որ յաճախ զանազան կենդանիներ ունենալով մի ընդհանուր ծագում՝ կեանքի զանազան պայմանների շնորհիւ սկսում են սաստիկ տարբերուել իրարից, մինչդեռ նոյն կենդանիների սաղմերն ունենալով մեծ նմանութիւն իրար հետ՝ ապացուցանում են այդ կենդանիների ցեղակից լինելը:

Այդ առիթով Չարլզ Դարվինն ասում է հետևեալը.

«Եթէ կենդանիների երկու խմբերում, որքան էլ որ նրանք տարբերուելիս լինեն այժմ իրանց կազմուածքով կամ կեանքի ձևով, սաղմային շրջանները միատեսակ են կամ նման են, մենք կարող են հաւաստի լինել, որ նրանք երկուսն էլ ծագել են կամ ընդհանուր ծնողներից կամ շատ նման ծնողներից, ուստի և այդ խմբերն ազգակից են իրար»\*):

Սրանով է բացատրւում, որ մեր ժամանակներում այնքան մեծ կարողութիւն է ստացել սաղմաբանութիւնը:

## II Օրգանիզմների ներքին կազմութեան վերաբերեալ հետազոտութիւններ.

Բնագիտութեան պատմութեան մէջ ընդմիշտ անմոռանալի կը մնայ 1839 թւականը, երբ լոյս տեսաւ Շվանի երեկի գիւտը՝ օրգանիզմների ներքին կազմութեան վերաբերեալ: Այդ գիւտի շնորհիւ պարզուեց բնութեան ամենամեծ գաղտնիքներից մէկը: Ինչո՞ւն էր կայանում Շվանի գիւտը:

Շվանը (նաև Շլէյդիւնը և մի քանի ուրիշ նշանաւոր գիտնականներ) ապացուցեց, որ ամեն մէկ օրգանիզմ կազմուած է անթիւ մանր էլեմենտներից—բջիջներից (cellule, элементы): Իւրաքանչիւր բջիջ այնքան փոքր է, որ նրան կարելի է նշմարել միայն խոշորացոյցի միջոցով: Անկարելի է ճիշտ հաշուել մէկ անհատի մարմնի բոլոր բջիջները, որովհետև դրանք անշափ շատ են լինում: Մի քանիսների կարծիքով՝ մէկ մարդի մարմնի բջիջների թիւը հասնում է բիլիոնների...

Իւրաքանչիւր օրգանիզմի էլեմենտները—բջիջները բաժանուած են մի քանի խմբերի—հիւսուածքների, որոնցից ամեն մէկը մարմնի մէջ մի որոշ պաշտօն է կատարում. օրինակ՝

\*) Ч. Дарвинъ—Происхождение видовъ, էջ 354:

մ'կանային բլիշների պաշտօնն է շարժել մարմինը, նեարդա-  
յին բլիշների շնորհիւ օրգանիզմն զգում է կայլն:

Այդ էլեմենտներն ինքնուրոյն կեանք են վարում մինչև  
մի որոշ աստիճան. նրանք սնունդ են կլանում, աճում են,  
բազմանում են, մեռնում են, մեռածների տեղը բռնում են նոր  
բլիշներ...

Տարօրինակ բան! Այդ գիւտի հիման վրայ՝ որևէ մարդ,  
թէև իրան մէկ անհատ է համարում, սակայն նա անհատ չէ,  
այլ պետութիւն է՝ բաղկացած անթիւ անհատներից—բլիշներից:  
«Բազմաբլիշ օրգանիզմը (դիցուք մարդ) բլիշային պե-  
տութիւն է և առանձին-առանձին բլիշները նրա քաղաքացի-  
ներն են»—ասում է էրնստ Հեկկելը \*):

Նոյն հեղինակն աւելացնում է. «պարզ սաղմային բլիշ-  
ները, որոնցից կազմուած է ողնաւոր կենդանու մարմինը, յա-  
րաբերում են մէկը միւսին. ինչպէս պետութիւն կազմող քա-  
ղաքացիներ՝ նրանց մի մասը մէկ գործ է կատարում, միւսն ու-  
րիշ գործ՝ յօգուտ ամբողջ օրգանիզմի: Աշխատանքի այս տեսակ  
բաժանման շնորհիւ... հնարաւոր է դառնում պետութեան հա-  
մար այնպիսի գործունէութիւն, որ անկարող է կատարել ան-  
հատը»:

Գուցէ ընթերցողը կարծէ, թէ վերոյիշեալ գիւտը սովո-  
րական մանր գիւտերից է, սակայն սխալ կը լինի այդպէս դատել.  
Շվանի գիւտը անցեալ դարի ամենախոշոր գիւտերից մէկն է,  
որովհետև նրա շնորհիւ հիմնովին փոխուեց բիօլոգների հայեաց-  
քն օրգանիզմների վերաբերմամբ, նոյնպէս հիմնովին փոխուեց  
«անհատի» մասին ունեցած գաղափար: Առաջ մէկ մարդը, մէկ  
ձին, մէկ շունը համարւում էին անհատներ, այժմ բիօլոգը դը-  
րանց վրայ նայում է իբրև առանձին համայնքների վրայ,  
որոնք կազմուած են անթիւ մանր «անհատներից»—բլիշներից:  
Այդպիսով այժմ անհատ համարւում է բլիշը: Ուրեմն այն, ինչ  
մենք անուանում ենք մէկ մարդի «կեանք», իսկապէս համայնքի  
կեանքն է. մէկ մարդի կեանքն անթիւ բլիշների կեանքի հա-  
մագումարն է:

Այս գաղափարներն ահագին ազդեցութիւն ունեցան բը-  
նական գիտութիւնների զարգացման վրայ:

Օրգանիզմի և պետութեան մէջ եղած նմանութիւնն աւե-  
լի մեծ է, քան մենք կարող ենք երևակայել: Յայտնի է՝ օրի-  
նակ, որ մէկ պետութիւն կամ համայնք կազմող անհատների  
մէջ տիրում է անընդհատ գոյութեան կռիւ. նոյնպիսի կռիւ

\*) Эрнстъ Геккель—Трансформизмъ и дарвинизмъ, էջ 153:

գոյութիւն ունի նաև մէկ օրգանիզմ կազմող բջիջները մէջ-վերջիններս անդադար մրցում են աննդի և տեղի համար: Այստեղ էլ գոյութեան կուր շնորհիւ թոյլ բջիջները ոչնչանում են, իսկ զօրեղները բռնում նրանց տեղը:

«Իւրաքանչիւր հիւսուածքի ամենաընտիր բջիջները, որոնք ամենից լաւ են կատարում իրանց պաշտօնը, ստանում են աննդարար հիւթերի լաւագոյն մասը. վերջինը նրանք խլում են աւելի թոյլ և քիչ գործունեայ բջիջներից: Առաջինները (ընտիր բջիջները) ածոււմ և բազմաւում են, մինչդեռ վերջինները վաղ թէ ուշ պէտք է ոչնչանան: Ուրեմն օրգանիզմների հիւսուածքների բջիջների մէջ եղած գոյութեան կուր վրայ մենք պէտք է նայենք իրրև հիւսուածքների ու գործարանների առաջադիմութեան և զարգացման զօրեղ սկզբնապատճառի վրայ» (Էրնստ Հեկկել):

Ինչպէս որ օրգանիզմների մէջ լինում է ընկալան ընտր-րուութիւն (естественный подбор), այնպէս էլ բջիջների մէջ լինում է բջիջային ընտրութիւն (клеточный подбор):

Վերջերուս վախճանուած անդլիացի հանճարեղ փիլիսոփա՝ Հերբերտ Սպինսերը իւր մէկ աշխատութեան մէջ մանր-րամանօրէն համեմատելով օրգանիզմը համայնքի կամ պետու-թեան հետ՝ զարմանալի եզրակացութիւնների օ հասաւ. նրա կարծիքով՝ օրգանիզմի և պետութեան մէջ եղած նմանութիւնը այնչափ մեծ է, որ պետութեան մէջ նկատուող համարեա իւրաքանչիւր նշանաւոր երևոյթի համապատասխանը կարելի է գտնել օրգանիզմի մէջ:

Յայտնի է, որ ամեն մէկ համայնքի մէջ իւր անհատի ազատութիւնը որոշ չափով սահմանափակոււմ է յօգուտ հասարակական շահերի: Նոյնը նկատոււմ է նաև օրգանիզմի մէջ. այստեղ էլ բջիջները որոշ չափով ազատութիւնից և ինքնուրոյնութիւնից զրկուած են, միայն ոչ հաւասար չափով: Բոլորից շատ ոսկրային բջիջներն են կորցրել ինքնուրոյն կեանքը, իսկ մկանային և նեարդային բջիջներն ընդհակառակը՝ համեմատաբար աւելի ազատութիւն ունին: Այդ տեսակէտից մանաւանդ հետաքրքիր են արեան մէջ գտնուած սպիտակ գնդակները. դրանք նոյնպէս բջիջներ են և զարմանալի բջիջներ են. նրանք ազատ շրջում են արեան անօթների մէջ, որսում են զանազան միկրոբներ, որոնց շրջապատում և կլանում են: Պատահում է նոյնիսկ, որ սպիտակ գնդակներն արեան անօթներից դուրս են գալիս որսի համար և նորից վերադառնում իրանց բնակավայրը—արեան անօթները: Մի խօսքով՝ կարծես դրանք բոլորովին ազատ կենդանիներ լինեն՝ պատահամբ

մտած մեր մարմնի երակներն մէջ: Սակայն, ինչպէս յետոյ կը տեսնենք, այդ բջիջներն անկոչ հիւրեր չեն մեղ համար և նոյնիսկ մեծ դեր էլ են կատարում մարդկանց կեանքում:

Մարդկանց օրգանիզմների նման բազմաթիւ կենդանիներ և բոյսեր նոյնպէս կազմուած են անթիւ բջիջներէց:

Այս գաղափարներն այժմեան բնագէտների աշխարհայեցողութեան հիմքն են կազմում. մեր ժամանակներում նոյնիսկ դժուար է երևակայել գիտական բիօլոգիա առանց վերոյիշեալ գաղափարների: Բնախօսութեան, բժշկականութեան, կենդանաբանութեան, բուսաբանութեան և սաղմնաբանութեան մէջ անկարելի է մի քայլ անգամ անել առանց բջիջների օգնութեան:

ՄԱՄՈՒԷԼ ԲԱԼԱՂԵԱՆ

(Գը շարունակով)

### Գ Ի Տ Ա Կ Ա Ն Ք Բ Ո Ն Ի Կ

Բաղիումը օրէցօր աւելի և աւելի է գրաւում գիտական աշխարհի ուշադրութիւնը: Արտասահմանեան թէ մասնագիտական և թէ ընդհանուր մամուլը լիքն են այդ բազմահրաշ մետաղին նուիրուած յօդուածներով: Այս յունուար ամսից Պարիզում սկսուել է հրատարակուել նրան նուիրուած յատուկ մի օրգան՝ Le Radium ամսագիրը: Չի անցնում ամիս, նոյնիսկ շաբաթ, որ չգտնուեն բաղիումի նոր յատկութիւններ, նորերումս գերմանական Der Motorwagen ամսագիրը նուիրել է մի յօդուած բաղիումին, իբրև ոյժի (էներգիայի) աղբիւրի:

Ինչպէս յայտնի է՝ \*) բաղիումը արձակում է ճառագայթներ, որոնք ոչ միայն զանազան քիմիական ազդեցութիւն ունեն, այլև ելեկտրալուծական: Եւ յօդուածագրի կարծիքով այս վերջին յատկութիւնը կարող է ունենալ մեծ գործնական նշանակութիւն, նամանաւանդ աւտոմոբիլների տարածման հարցում: Այժմ իհարկէ՝ խօսել այդ բանի մասին դեռ շուտ է, քանի որ բաղիումը չափազանց հազագախտ է և թանգ: Այժմ՝ օրինակ՝ մի գրամ մաքուր բաղիումը (մօտ  $\frac{1}{4}$  մսխալ) արժէ մօտ մի միլիոն ռուբլի: Բայց հէնց վերջին ժամանակներս հանդայից յայտնում են, որ այնտեղ գտնուած է մեծ քանակութեամբ բաղիում պարունակող մի հանք, որը շուտով կը սկսուի:

\*) Տես «Մուրճ», 1903, № 4 և 8: